



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕԾՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

27 ապրիլի 2022 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕԾՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԸ ՉԿԱՅԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

2022 թվականի ապրիլի 27-ին ժամը 11:00-ին հրավիրված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու հերթական դռնբաց նիստին մասնակցելու համար մինչև ժամը 11:30-ը ավագանու տասը անդամից ներկայացել էր միայն երկուսը՝ Արսեն Ղարիբջանը և Աղաբեկ Մոսիսյանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

Համայնքի ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում նիստի իրավազորությունը, կամ նիստին չի ներկայանում համայնքի ղեկավարը, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, նիստին ներկա ավագանու անդամները կազմեցին սույն արձանագրությունը ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 27-ի հինգերորդ հերթական նիստը չկայանալու մասին:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

Ա.ՄՈՍԻՆՅԱՆ

ՕԾՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ



Արձանագրեց՝
ՀՀ Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար Հ. Գալստյանը